Ս. ՇՏԻԿՅԱՆ

ՓՈՔՐԻԿ ԼՐԱՑՈՒՄ ՄԵԾ ԴԻՄԱՆԿԱՐԻՆ

(Հր. Ներսիսյանի մահվան 15-ամյակի առթիվ)

Կենտրոնում Հրաչյա Ներսիսյանն է, Կոխի հոգեբուժական կլինիկայի պրոֆեսոր Շիլլերի դերում, «Անձամբ ճանաչում եմ» կինոնկարից (սցենարի հեղինակ՝ Մ. Մաքսիմով, ռեժիսորներ՝ Ս. Կևորկով և Է. Քարամյան)։ Ներսիսյանին «ֆոն» են կազմում Վ. Դանիելյանը (այժմ՝ նկարահանման խմբի ռեժիսոր) և տողերիս գրողը։

Կինոնկարը դիտած անձիք, սակայն, առանց հիշողության մեծ լարման կհիշեն, որ պրոֆեսսոր Շիլլերի դերն այստեղ կատարում է ոչ թե Հրաչյա Ներսիսյանը, որը, ի դեպ, սկզբից իսկ նախորոշված էր, այլ Վաղարշ Վաղարշյանը։ Ծագում է բնականոն մի հարց. Իսկ ինչն էր պատճառը։ Որն էր մեկ ականավոր դերասանին մյուսով փոխարինելու դրդապատճառը։ Հարցն ունի իր բավական ուշագրավ պատմությունը, որը, կարծում ենք, կարող է հետաքրքրական լինել։

* * *

- Չեմ հասկանում այդ պրոֆեսոր Շիլլերին, - մի անգամ իրեն հատուկ շեշտակի տոնով նետեց Հրաչյա Ներսիսյանը ստուդիայի ռեժիսորներից մեկի հետ խոսելիս, – չեմ հասկանում, բաբամ։

Հարցադրումն ուշագրավ էր և ինձ՝ ստուդիայի նորընծա աշխատողիս համար, մի փոքր էլ զարմանալի։ Դերը չի հասկանում։ Ներսիսյանը։ Նախ՝ այն միամիտ կարծիքն ունեի, որ դերասանը դերի՝ ընդամենը խաղացողն է, սոսկ կատարողը և շատ էլ պարտադիր չէ նրան դերը հասկանալը և երկրորդ, խորապես հավատացած էի, որ անկարելի ու անհնարին է նման մի բան պատկերացնել անգամ, երբ խոսքը վերաբերում էր Ներսիսյանին։

Այնուամենայնիվ, միտքն ուշագրավ էր, և առաջին իսկ առիթով հանդիպելով ականավոր դերասանին (նա հագնվում էր հարդարանոցում փորձնական նկարահանումների համար), – դա 1957 թվականի ապրիլն էր, – ես նորից խոսք բացեցի պրոֆեսսոր Շիլլերի մասին։

Սպասում էի որևէ հումորային պատասխանի կամ ուրախ խոստովանության, որ կատակ է արել, կամ մեկ հատիկ «վազն անցիր»-ով խոսակցության կարճ ավարտ։ Բայց այդպես չեղավ։

- Դու ի՞նչ գիտես Կոխի հոգեբուժական կլինիկայի մասին, – շեշտակիորեն ինձ ընդհատեց Ներսիսյանը։

Կոխի հոգեբուժական կլինիկայի մասին գիտեի այնքանը միայն, ինչ կար Մկրտիչ Կորյունի «Կամո» վեպում։ Քիչ համառոտ ձևով այդքանն էլ ասացի։

- Ապրես, ապրես, – ինձ մինչև վերջ լսելուց հետո, խոսք առավ Ներսիսյանը, – հիմա ինձ լսիր։ Կոխի կլինիկան համաշխարհային անուն ունեցող հոգեբուժական հաստատություն էր։ Նրանց դրած դիագնոզները հիսուն-վաթսուն տարի հետո անգամ իրենց ճշգրտությունը չէին կորցնում։ Սա էլ (մատը խփեց կրծքին՝ ակնարկելով պրոֆեսոր Շիլլերին) այդպիսի մի կլինիկայի անուն ունեցող պրոֆեսորներից է։ Հասկացա՞ր ասածս։ Համաշխարհային համբավ ունեցող հոգեբուժական հիվանդանոցի անվանի պրոֆեսոր։ Է, նա չկարողացա՞վ Կամոյի սիմուլյացիան հասկանալ, ինչ ես կարծում։

- Դե՝ Կամոն խելագարությունը տաղանդավոր կերպով էր խաղում...

- Տաղանդավորը՝ ըշտե հասկացանք, ասելիք չունեմ, բայց նա կարողացավ պրոֆեսոր մարդուն է՞լ խաբել։ Այն էլ այսպիսի մեծանուն կլինիկայի նշանավոր պրոֆեսորին։

Մի պահ լռեցինք։

- Եթե դա այդպես է, – խոսքն առաջ տարավ Ներսիսյանը, - այսինքն՝ եթե Կամոն կարողացել է նրան հիմարացնել, ուրեմն այդ Շիլլեր ասվածը որպես բժիշկ-հոգեբույժ բոշիբողազի մեկն է եղել. այսպիսի մի բան, - և Ներսիսյանը տեղնուտեղը ավարա մարդու այնպիսի մի բնորոշ կերպարանք ընդունեց, որ ես փռթկացի։ - Է, ուրեմն ես դերն այդպես պիտի խաղամ։ Իսկ եթե խաղամ որպես լիքգլուխ գերմանացի պրոֆեսոր, որը լավ գիտե իր գործը և որին անհնար է խաբել՝ կտապալվի Կամոյի ամբողջ այդ խելագարության տեսարանը։

Մենք դարձյալ լռեցինք։ Դժվար չէ նկատել, որ իսկապես, մտածելու բան կար։

- Բայց ի վերջո, պատմական ճշմարտություն է այն փաստը, որ Կամոն կարողացել է Շիլլերին հավատացնել, թե ինքը խելագար է, – խոսակցությանը միջամուխ եղավ Վ. Դանիելյանը։

- Այստեղ մի կարևոր բացատրելիք կա, – Ներսիսյանը առաջ հակվեց, – պրոֆեսոր Շիլլերի մոտ անընդհատ գնում-գալիս էին մարդիկ, որոնք շահագրգռված էին, որ Կամոն հոգեկան հիվանդ համարվի։ Ինչու, գիտե՞ք։ Որովհետև եթե պրոֆեսորը գտներ, որ Կամոն առողջ

է, ուրեմն նրան պետք է վերադարձնեին Ռուսաստան։ Ռուսաստանում Կամոն պաշտոնապես հայտարարված էր պետական հանցագործ, ուրեմն՝ մահապատիժն անխուսափելի էր։ Իմացա՞ք։ Գուցե այդ մարդիկ աղաչել-պաղատել են սրան (մատը կրկին խփեց կրծքին՝ ակնարկելով պրոֆեսոր Շիլլերին), որ մի կերպ իր պացիենտին խելագար հայտարարի, գուցե և մեծ վարձատրություն են խոստացել ... ով գիտե։ Մի խոսքով՝ հարցը հետաքրքիր է։

- Իսկ եթե հենց այդպես էլ խաղաք, – ոգևորված սկսեցի ես, - այսինքն՝ պրոֆեսոր Շիլլերը հիանալի հասկանում է, որ իր հիվանդը խելագար չէ, բայց, հաշվի առնելով այդ գործով շահագրգռված անձանց միջնորդությունները, սխալ է ախտորոշում նրան, որպեսզի ...

- Սցենարն այդքան հնարավորություն չի տալիս, – ասաց Ներսիսյանը մտահոգ, – ես էլ եմ մտածում այդ ձևով բանալ Շիլլերի դերը (դերասանը ձեռքերով «բացելու» շարժում արեց), բայց սցենարը ... Առհասարակ Շիլլերի դերը շատ էպիզոդիկ է, փոքր, այնինչ այդպես չպետք է լիներ։ Ես շատ եմ անհանգստանում, որ այդ դերն առհասարակ չհասնի հանդիսատեսին։

- Իսկ ինչեր կարելի էր անել, – քիչ լռելուց հետո նորից սկսեց Ներսիսյանը, - մարդիկ են գալիս, կամենում են համոզել պրոֆեսորին, որ Կամոյին խելագար համարի, պրոֆեսորը զայրացած մերժում է, որովհետև չի կարող խղճին դեմ գնալ։ Նրանք էլ խնդրում են, աղաչում, բացատրում են ինչն ինչոց է, պրոֆեսորը հոգեկան վիճակներ է ապրում, որովհետև ճիշտ դիագնոզ տա՝ չի լինի, սխալ տա՝ էլի չի լինի։ Վերջ ի վերջո նրա մոտ մարդն ավելի ուժեղ է դուրս գալիս, քան մասնագետ-հոգեբույժը, և նա Կամոյին խելագար է ախտորոշում... Էհ, ասելու շատ բան կա, – իր խոսքն ամփոփեց դերասանը։

- Իսկ սցենարի քննարկման ժամանակ եթե այդ բոլորն ասեիք..., – նկատեց Վ. Դանիելյանը։

- Է՛, ես դերասան եմ, թե քննադատ, – ուրախ աչքով արեց Ներսիսյանը, – իմն այսքանն էր, ասացի՝ պրծա։ Մյուսները դուք գիտեք։ Այ դրա համար եմ ասում, որ պրոֆեսոր Շիլլերին չեմ հասկանում։

Այդ տրտունջները հետագայում լսեցի մի քանի անգամ էլ։

Շուտով դրանց ավելացավ մի ուրիշ «թերություն» ևս. Ներսիսյանի դեմքը վառ արտահայտված հայկական նկարագիր ուներ և ոչ մի կերպ չէր համապատասխանում գերմանացի պրոֆեսորի՝ ռեժիսորների պատկերացրած կերպարին։ Եվ ինչքան էլ աշխատեցին

դիմահարդարները, ինչքան էլ տքնեցին, որ «ջնջեն» Ներսիսյանի դեմքից «հայկականը» և դարձնեն «գերմանական», արդյունքները գոհացուցիչ չեղան։ Այս բոլոր «թերությունների» միասնության պատճառով էլ դերասանը առանց մեծ դժվարության համաձայնեց, որ իր փոխարեն պրոֆեսոր Շիլլերի դերը կատարի Վաղարշ Վաղարշյանը։

Այս է վերոհիշյալ լուսանկարի փոքրիկ պատմությունը։

Երեկոյան Երևան, 1979, մարտի 24, № 69